



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, +374-285-42036, 060521818, kapan.syunig@mta.gov.am,

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ապրիլի 2019 թվականի N 572-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՏՍԵՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԽՄԲԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԵՆԹԱԽՄԲԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետը,

ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին և 2-րդ ենթախմբի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 2019 թվականի մայիսի 17-ին նշանակել մրցույթ հետևյալ թափուր պաշտոնների համար՝

- 1) աշխատակազմի քարտուղարության բաժնի առաջատար մասնագետներ (ծածկագրեր՝ 3.1-7 և 3.1-8).
- 2) աշխատակազմի քարտուղարության բաժնի 1-ին կարգի մասնագետներ (ծածկագրեր՝ 3.2-1 Աճանան բնակավայր, 3.2-4 Գեղանուշ բնակավայր, 3.2-8 Արծվանիկ բնակավայր, 3.2-14 Կաղնուտ բնակավայր, 3.2-21 Տանձավեր բնակավայր, 3.2-25 Խդրանց բնակավայր, 3.2-27 Սրաշեն բնակավայր,).
- 3) աշխատակազմի ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-28)
- 4) աշխատակազմի տնտեսական զարգացման և արտաքին կապերի բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-13),



5) աշխատակազմի եկամուտների գանձման, առևտրի և սպասարկման բաժնի առաջատար մասնագետներ (ծածկագրեր՝ 3.1-15, 3.1-17 և 3.1-18),

6) աշխատակազմի քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բաժնի առաջատար մասնագետներ (ծածկագրեր՝ 3.1-19, 3.1-20, 3.1-21, 3.1-29 և 3.1-30)

7) աշխատակազմի գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 3.1-23):

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 1-ին և 2-րդ ենթախմբի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

3. Աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ



2019թ. ապրիլի 08
ք. Կապան